րացին, որ վէքիլները բերած էին 1607ին, գժտուած էր նաև անոնց հետ և դէմ ելած անոնց, գիտակցութեամբ Դարանաղցիին։

Դարանաղցի շարունակելով իր խօսքը կ'ըսէ թէ հաւաքուած ժողովուրդը Գրիգոր Կեսարացին լսելէ յետոյ «ասացին ամենեքեան, անհաւասարիկ կամք առաջի ձեր եւ ուր որ կու հրամայէք, պատրաստ եմք։ Եւ եղեալ մեր պատրաստեցաք առ ի գնալ, եւ ասացաք իւրն թէ՝ հրամայէ որ երթամք ի միասին։ Նա (Կեսարացին) յողոք անձկեալ ասաց. ես չեմ կարողանայր գնալ ընդ ձեզ, զի վաղնջուց հետէ չեմ գնացեր ի տիւանն եւ յայս թագաւորէս պարապ չեմ նորեր. ահա Քոթահիացի Յակոբ եպիսկոպոսն եւ Երզնկացի Կարապետ երէցն փոխանակ իմ ընդ ձեզ»։

Հօս իրողութիւն մը երևան կու գայ, որ չափազանց կարևոր է թէ՛ Կ. Պոլսոյ պատրիարքաց պատմութեան և թէ՛ Գրիգոր Կեսարացիի կենսագրութեան տեսակէտով։ Ինչպէս կը տեսնուի այս խօսքերէն, իսկական իշխանութիւնը 1605ին անցած էր աշխարհական վէքիլներու ձեռքը և Գրիգոր Կեսարացի ճանչցուած պատրիարք մը չէր։ Վէքիլները զայն բերած էին Կ. Պոլսոյ մէջ տիրող բնիկներու և եկուորներու մէջ ծագած վէճերը իր հեղինակու-